

Հիմնարկները կկրճատվեն, գիտաշխատողները՝ ոչ

Սպասվում է անարդյունավետ աշխատող գիտական հիմնարկների օպտիմալացում

Գիտության ոլորտի նորությունների, խնդիրների ու անելիքների մասին «ՀՀ»-ն գրուցել է ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի հետ:

—Պարո՛ն Հարությունյան, վերջին շրջանում գիտության ոլորտում ի՞նչ նորություններ, զարգացումներ կան:

—Գիտության ոլորտի ծրագրերը մինչև հեղափոխությունն էլ ինտենսիվորեն իրականացվում էին: Ըստ մեր կանխատեսած ծրագրերի՝ մեր գործողություններն իրականացնում ենք: Իսկ թե ի՞նչ նոր բան կա հիմա՝ ավելի ճիշտ կլինի ասել՝ «հին նոր» բան կա, որովհետև վաղուց էինք ուզում ներդնել: Խոսքը բազային ծրագրերի ֆինանսավորման նոր մոդելի կիրառման մասին է: Եկող տարվանից ուզում ենք անցնել ռեյտինգային ֆինանսավորման: Ո՞րն է դրա իմաստը. բյուջետային ֆինանսավորման շրջանակում հիմնարկները կֆինանսավորվեն ոչ թե ըստ աշխատակիցների թվաքանակի, այլ գիտական արդյունքով: Յոթ տարբեր չափանիշ կա, որոնցով հաշվելու են տվյալ հիմնարկի միավորները: Հետո, ըստ հավաքած միավորների, կստանան իրենց բազային ֆինանսավորումը: Ֆինանսավորման այս տարբերակն ավելի ազնիվ ու նպատակային է: Նախորդ ձեւերը, կարելի է ասել, ժամանակի ընթացքում իրենց չարդարացրին, որովհետև հիմնարկները ըստ աշխատողների թվի ֆինանսավորելն այդքան էլ ճիշտ չէ:

Հաջորդ փուլը կլինի ոչ արդյունավետ աշխատող հիմնարկների օպտիմալացումը: Հիմնարկներ կան, որոնք, մեղմ ասած, վատ են աշխատում, կամ ֆինանսավորման շրջանակներում բավարար քանակությամբ գիտական արդյունք չեն տալիս: Դա կհանգեցնի հիմնարկների, այլ ոչ թե գիտաշխատողների կրճատման, որովհետև ռեյտինգային ֆինանսավորման սխեմայի կիրառումը չի ենթադրում աշխատողների կրճատում, ընդհակառակը, ակտիվ գիտաշխատողների աշխատավարձի բարձրացում է ենթադրում, ինչու ոչ՝ նաև ավելացած գումարների շրջանակում ավելի ակտիվ երիտասարդների ընդգրկման սխեմաներ է ենթադրում: Հիմնարկների թվաքանակի փոքրացում պետք է սպասել հաջորդ տարվանից:

—Գիտնականների երիտասարդացման խնդիրը դեռևս արդիակա՞ն է:

—Իհարկե, երիտասարդացման խնդիրը կա: Երիտասարդներին միտված բազմաթիվ ծրագրեր ունենք, որոնք 2012-2013 թվականներից իրականացնում ենք: Այդ առումով ԱՊՀ տարածաշրջանում ամենաշատ ծրագրերը երեւի մենք ենք իրականացնում: Դրանցից է «Երիտասարդ գիտնականների թիմային ծրագրերի աջակցության» ծրագիրը: Երեք-չորս հոգանոց թիմերին տալիս ենք տարեկան մինչև 10-15 հազար դոլարի չափ գումար: Երկու տարվա ծրագիր է: Այսինքն՝ 20-30 հազար դոլարի շրջանակներում ծրագրեր ենք իրականացնում: Իսկ «Ասպիրանտուրաների հայցորդների աջակցության» ծրագիրը շահողները ստանում են 1.5 մլն դրամ: Մեր բոլոր դրամաշնորհային ծրագրերում պարտադիր մեկ երիտասարդ պետք է լինի: Անկախ հանգամանքից՝ որ տարիքի ներկայացուցիչներին են ուղղված, բոլոր ծրագրերում պարտադիր մինչև 35 տարեկան գոնե մեկ երիտասարդ պետք է

լինի: Ունենք նաև առավել ակտիվ աշխատող երիտասարդների բնուսային ծրագիր, որը շատ երկրներում չկա: Դրա շրջանակում ամեն տարի երիտասարդ գիտնականների գիտաչափական արդյունքների ամփոփում ենք իրականացնում, եւ առավել ակտիվ աշխատողներին, աշխատավարձից բացի, նաև բոնուս ենք տալիս: Մինչև 75 հազար դրամի շրջանակում բոնուս է ստանում մեկ տարի շարունակ:

—Երիտասարդների աշխատանքը, ակտիվությունը գոհացնո՞ղ է:

—Ակտիվությունը գոհացնում է, բայց երիտասարդական ծրագրերի իրականացումը ինչ-որ իմաստով պետք է վերանայել, որովհետեւ, այնուամենայնիվ, մենք ուղեղների «հոսք» ունենք: Ակտիվ աշխատող երիտասարդներն ինչ-որ ժամանակ անց դրսից ավելի բարձր աշխատավարձով հրավերներ են ստանում ու հեռանում են Հայաստանից: Երիտասարդական ծրագրերը շատ լավն են, բայց դեռ բավարար չեն, որպեսզի կարողանանք արդեն իսկ կայացած երիտասարդների պահել մեր երկրում: Պետությունը, կարծում եմ, պետք է մտածի նաև ինչ-որ ձևով սխեմաներ, մեխանիզմներ գտնելու ուղղությամբ, որպեսզի կայացած երիտասարդներին կարողանանք պահել մեր երկրում: Դա համարում եմ ամենակարևոր խնդիրներից:

Եթե գիտնականների տարիքային բաշխումը նայենք՝ 35-55 տարեկանների ինտերվալում բավականին խոր մինիմում ունենք: Վտանգավոր միտում է դա, որովհետեւ 35-55-ը ուսուցիչների ինտերվալն է: Ծրագրերի գիտական ղեկավարները հիմնականում տարիքային այդ հատվածում են: Պետք է այնպես անել, որ այդ տիրույթը լցվի: Տարբերակներ կան: Իհարկե, ամենամեծ խնդիրներից է գիտության բյուջեի ոչ բավարար լինելը: Հույս ունենք, որ ռեյտինգային ֆինանսավորման անցնելուց հետո գումարներն ավելի ճիշտ կբաշխվեն, եւ պետությունն էլ արդեն, կարելի է ասել, գիտության բյուջեն ավելի կշատացնի, եւ դա հիմնականում կուղղենք երիտասարդներին:

—Գիտության ֆինանսավորման մասին ՀՀ վարչապետը ԳԱԱ-ում վերջերս ասաց, որ առաջարկել է հրաժարվել փողի մասին խոսակցությունից, որովհետեւ եթե որեւէ խոսակցություն սկսվում է փողից, արագ մտնում ենք փակուղի: Ի՞նչ կասեք:

—Փաշինյանը խոսում էր այն մասին, որ գիտատար ծրագրերի համար, որոնք կարող են ապահովել տնտեսական արդյունք, միշտ էլ գումար կգտնվի: Նմանատիպ մի ծրագիր մոտակա ժամանակներում կֆինանսավորվի: Խոսքը «Հայի գենոմ» ծրագրի մասին է: Դա կարելի է համարել ոչ միայն կարևոր հետազոտական, այլև կառուցվածքաստեղծ ծրագիր: Մենք ենթադրում ենք, որ «Հայի գենոմ» ծրագիրը պետք է որոշ ոլորտներ իր հետեւից ուժեղացնի: Այն կզարգացնի մոլեկուլային կենսաբանության, մոլեկուլային դեղաբանության եւ ֆիզիկայի որոշ ոլորտներ, նաև քիմիայի, մաթեմատիկայի ու ինֆորմատիկայի ոլորտները: Առաջիկա 3-4 տարվա համար ծրագրի մասով նախատեսված է 10 մլն դոլարի ներդրում: Հույս ունենք, որ հետագայում, պետական ներդրումներից բացի, կգտնվեն նաև մասնավոր ներդրողներ, որովհետեւ թեեւ անվանումը «Հայի գենոմ» է, բայց միտված է ոչ միայն մեր երկրի համապատասխան խնդիրների լուծմանը, այլև համաշխարհային ծրագիր է: «Հայի գենոմը» շարունակությունն է «Մարդու գենոմ» ծրագրի, որը համաշխարհային ծրագիր է, հիմնադրվել է 1980-ականներին: Այդ ծրագրի վրա արդեն շուրջ 50 մլրդ դոլար գումար է ծախսվել:

—Գուցե հարցս սխալ եմ ձևակերպում, բայց վերջին ժամանակներում գյուտեր ունե՞նք:

—Գյուտեր միշտ էլ եղել են: Հայտնագործություններն են ավելի հազվադեպ լինում: Մեկ դարի ընթացքում հնարավոր է՝ մի քանի խոշոր հայտնագործություն լինի համաշխարհային մասշտաբներով: Հայաստանում, ցավոք, անկախության տարիներին խոշոր հայտնագործություններ դեռ չեն եղել: Բայց մեր երկրում ունենք գիտնական, որը հայտնագործության հեղինակ է՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լեւոն Թավադյանը:

—Հայաստանի գիտական ներուժն ամբողջությամբ օգտագործվո՞ւմ է, թե՞, ամեն դեպքում, չօգտագործված ներուժ ունենք:

—Ամեն ինչ համեմատության մեջ է: Ես ամենեւին չեմ ուզում վիրավորել այլ ազգերի, ասել, թե ավելի թույլ են, մենք ավելի ուժեղ ենք: Բայց պետք է ասել, որ գիտական կարողություններ ունեցող մարդկանց թվաքանակն իրոք հայերի շրջանում ավելի մեծ է, քան այլ ազգերի: Լինելով փոքր ազգ, մենք աշխարհին ավելի շատ բան ենք տվել, քան շատ մեծ ազգեր (թվարկում է դրանք): Մենք ավելի ունակ ենք: Բայց գիտական կարողություններն ամբողջությամբ օգտագործելու համար պայմանները դեռ այն չեն: Գիտության վրա այսօր մեր ծախսած գումարների շրջանակում բավականին լուրջ գիտական արդյունք ենք տալիս: Եվ եթե գիտաչափական տվյալները համեմատենք նախկին խորհրդային երկրների հետ՝ մեր հանրապետությունը բավականին առաջատար դիրքեր է զբաղեցնում: Եթե ավելի շատ գումար տրամադրվեր գիտությանը, կարծում եմ, ավելի շատ ի վիճակի կլինեինք անելու: Բավականին լուրջ գիտական ներուժ ունի մեր երկիրը: Եվ այդ ներուժն օգտագործելու համար նաեւ տնտեսությունը պետք է պատվեր տա: Եթե գիտնականին պատվեր չես տալիս, գիտնականն անում է այն, ինչ կարողանում է: Դրա համար մեր գիտական հիմնարկների զգալի մասը դարձել են հիմնարար հետազոտություններ իրականացնող հիմնարկներ, բայց ժամանակին կիրառական գործերով էին զբաղվում: Ռեալ արդյունք ստանալու համար, գիտնականին հստակ ձեւակերպված պատկեր պետք է տալ: Համոզված եմ՝ հայ գիտնականը ցանկացած պատվեր ի վիճակի է իրականացնելու: Օրինակ, ռազմական ոլորտում մենք տպավորիչ արդյունք ենք գրանցել վերջին տարիների ընթացքում, որովհետեւ հստակ պատվերը տրվում է: Մեզ մոտ պետության կողմից պատվեր տալու մշակույթը դեռեւս լավ մշակված չէ: Այդ ուղղությամբ հարկավոր է աշխատել: Գիտնականի ու պետության միջեւ կապը պետք է լինի հստակ:

—Կառավարության ծրագրի գիտական հատվածը խնդիրներին լուծում տալի՞ս է:

—Գիտական մասը մի քանի կետերով է ձեւակերպված: Եթե ուշադիր նայենք՝ իմ ասած բոլոր խնդիրներն այդ կետերում ներառվում են: Իսկ թե ինչպես դա կիրականացվի՝ դժվարանում եմ ասել, որովհետեւ կետերը՝ կետեր, բայց կետերի իրականացման փուլերն ու մեխանիզմներն էլ խիստ անհրաժեշտ են, որոնք ինչ-որ փաստաթղթերում ժամանակի ընթացքում կամրազրվեն:

ՀՀ վարչապետի հետ զրույցի ժամանակ նա մի գաղափար հնչեցրեց, որն ինձ շատ դուր եկավ: Ըստ այդմ, մեր ռազմավարական թիվ մեկ խնդիրը պետության անվտանգության ապահովման խնդիրն է: Տնտեսության մյուս բոլոր ոլորտների ռազմավարական ծրագրերն այնպես պետք է կառուցել, որ առավելագույնը կարողանանք պետության անվտանգության խնդիրը լուծել: Եթե նախանշված է՝ ինչ վերջնական խնդիր ես լուծում, ապա այդ փուլերը կարելի է գեղեցիկ ձեւակերպել ու հասնել վերջնական նպատակին: Կրթության եւ գիտության ոլորտում ես պատկերացնում եմ՝ դա ինչպես պետք է անել: Եթե անվտանգության խնդիրը

մեզ մոտ թիվ մեկ խնդիրն է, ուրեմն՝ բուհը պետք է միտված լինի ֆիզիկատեխնիկական, ինժեներատեխնիկական ոլորտների, գյուղաբույսի, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների պատրաստմանը: Եվ որպեսզի կարողանանք պատրաստել ինչպիսի ուսանողներ, որոնք մեր գերակա խնդիրներով են զբաղվելու, դպրոցն էլ համապատասխան աշխատանքներ պետք է տանի: Ես ենթադրում եմ, որ եթե ֆիզիկատեխնիկական, ինժեներատեխնիկական ոլորտները ապագայում պետք է դարձնենք մեր գերակա ուղղությունները, ուրեմն դպրոցում կարևոր ոլորտների հանդեպ ուշադրությունը պետք է ընդգծվի: Ֆիզիկամաթեմատիկական թեքումով դպրոցների թիվը պետք է շատացնել, վերականգնել խմբակները, օրինակ, ավիամոդելիզմի, ռոբոտիկայի: Բուհից հետո էլ գիտությունն է: Եթե անվտանգությանն են միտված մեր ամբողջ ջանքերը, նշանակում է, որ գիտության մեջ էլ պետք է ուշադրություն դարձնենք մեր պետության անվտանգությունն առավելագույնն ապահովող ոլորտներին՝ ռազմարդյունաբերություն, տեղեկատվական, նորագույն տեխնոլոգիաներ, բժշկություն եւ այլն:

Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ